ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 345-Ա **09 հուլիսի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ և ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2024 թվականի հուլիսի 4-ի N 95/12/149-24 գրությունը,

որոշում եմ՝

1. 2024 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Փրկարարական աշխատանքների իրականացումը պայթունի հետևանքով վնասված շենքում» թեմայով:

2. Ուսումանավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գևորգ Գալստյանին:

3. Հաստատել՝

1) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նմանակողների խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի:

4. Ուսումանավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը,

2)Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի բաժնից մեկ խումբ,

3) «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից աղետների բժշկության մեկ խումբ,

4) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Վարդենիսի գազաֆիկացման և գազամատակարարման միավորումից վթարավերականգնողական մեկ խումբ,

5) «Հայկական էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության Գեղամա մասնաճյուղի Վարդենիսի էլեկտրական ցանցի վթարավերականգնողական մեկ խումբ:

5. Ուսումնավարժության ղեկավար, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գևորգ Գալստյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության օրացուցային պլանի.

2) կազմակերպել համագործակցություն՝ ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում տեղական լրատվամիջոցներով բնակչությանը տեղեկացնել ուսումնավարժության բնույթի մասին.

4) ուսումնավաժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2024 թվականի հուլիսի 16-ին.

5) ուսումնավարժությունն անցկացնելուց հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան իրավիճակներում գործելու պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին.

5) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին:

09.07.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ
08428824
«ՈՐՈՒՄՈՒՆՔ»

ք. Գավառ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հուլիսի 9 -ի
N 345-Ա որոշման

ԿԱԶՄ

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում անուն, ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ գնդապետ Գ.Հակոբյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
2	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի անդամ կապի կազմակերպման գծով	փ/ծ մայոր Վ.Գորոյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
3	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի անդամ, փաստաթղթերի մշակման գծով	փ/ծ կապիտան Լ.Պիպոյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ
Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ			
4.	Խմբի պետ	փ/ծ փոխգնդապետ Ա. Պետրոսյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ պետ
5.	Խմբի անդամ	փ/ծ կապիտան Ա. Անտոնյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ

09.07.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀՀ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՑԱՌՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ «ՈՐՈՒՄՈՒՆՈՎ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ» 08428824

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հուլիսի 9-ի
N 345-Ա որոշման

ԿԱԶՄ
ՅՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՄԱՆԱԿՈՂՆԵՐԻ ԽՄԲԻ

ՀՀ	Պաշտոնը ուսումնավարժությունում	փ/ծ կոչում անուն, ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	խմբի պետ	փ/ծ լեյտենանտ Մխիթար Կարապետյան	ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի հրամանատար
2	խմբի անդամ	փ/ծ ենթասպա Արտյոմ Աբրահամյան	ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի հերթափոխի պետ
3	խմբի անդամ	փ/ծ ավագ Սեմյոն Երիցյան	ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի օղակի հրամանատար
4	խմբի անդամ	փ/ծ ավագ սերժանտ Հայկ Վարդանյան	ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի ավագ հրշեջ-փրկարար
5	խմբի անդամ	փ/ծ սերժանտ Միեր Մինասյան	ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի վարորդ

09.07.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի

2024 թվականի հուլիսի 9 -ի

N 345-Ա որոշման

Պլան

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության

ՈՒսումնավարժության թեման «Փրկարարական աշխատանքների իրականացումը պայթունի հետևանքով վնասված շենքում»:

ՈՒսումնավարժության նպատակները՝

1. Վարժանքի ընթացքում ստուգել և կատարելագործել ՄՓՎ ստորաբաժանումների անձնակազմի ունակությունները՝ իրենց առջև դրված հրդեհաշիջման և փրկարարական խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Կատարելագործել անձնակազմի կազմակերպչական և գործնական ունակությունները հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների ժամանակ:

3. Կատարելագործել փոխհամագործակցությունը հրշեջ-փրկարարական և արագ արձագանքման խմբերի միջև:

ՈՒսումնավարժության մասնակիցները՝

- ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն,
- ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի, Մարտունու և Վարդենիսի հրշեջ փրկարարական ջոկատ,
- ՆԳՆ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի բաժնից մեկ խումբ,
- «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ աղետների բժշկության մեկ խումբ,
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարդենիսի տարածքային տեղամասի վթարավերականգնողական մեկ խումբ,

- «Հայկական Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ Վարդենիսի տեղամասի վթարավերականգնողական մեկ խումբ:

ՈՒսումնավարժության անցկացման օրը և ժամը՝ - 17.07.2024թ. Ժ 14^{30} – 15^{30}

ՈՒսումնավարժության անցկացման վայրը՝- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի «Լեռնագործներ» հյուրանոց լեռնագործների 4:

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացում՝ 17.07.2024թ.-ին ժամը 14^{30}–ի սահմաններում հակառակորդի ռմբակոծության հետևանքով հրդեհ է բռնկվել Վարդենիս քաղաքի «Լեռնագործներ» հյուրանոցի տարածքում կայանված ավտոմեքենայում, ռմբակոծության հետևանքով հյուրանոցի շենքը կրել է վնասներ, կան մասնակի փլուզումներ, փլատակներում կա 3 տուժած, առկա է գազի արտահոսք, վթարավել է 1 էլեկտրական հենասյուն, առկա է խուճապային իրավիճակ:

Ուսումնավարժության անցկացման կարգը

հ/հ	Ժամանակը	Միջոցառման անվանումը	ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները	ՈՒսուցանվողների գործողությունները
	14^{00}-14^{20}	Օդային տագնապ	Հետևում է իրավիճակին	շենքից տարհանվում և պատսպարվում են թաքստոցում
1	14^{30}-14^{32}	Գեղարքունիքի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի ազդարարում և հավաք, մարզի ՔՊ ղեկավար կազմի ազդարարում, Վարդենիս քաղաքի արագ արձագանքող ծառայությունների ահազանգում,	Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ին հաղորդվում է ահազանգ հրդեհի և պայթյունի հետևանքով վնասված ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի «Լեռնագործներ» հյուրանոցի վերաբերյալ: Հրամայում է իրականացնել անձնակազմի հավաք, ահազանգել արագ արձագանքող ծառայություններին:	Ստանալով ահազանգ արտակարգ դեպքի վերաբերյալ, դեպքի վայր է մեկնում Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ից երկու մարտական հաշվարկ, ՄՓՎ ՃԿԿ-ն իրականացնում է անձնակազմի և մարզի ՔՊ ղեկավար կազմի ազդարարում: Տեղեկատվությունը փոխանցում է Վարդենիս քաղաքի արագ արձագանքող ծառայություններին:

2	14^{32}- 14^{37}	Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի, Մարտունու, Գավառի ՀՓՋ-ներից լրացուցիչ ուժեր և ք. Վարդենիսի հերթապահ ծառայությունների արձագանքող ուժերի ժամանում դեպքի վայր:	Ներկայացնում է ստեղծված իրավիճակը և կատարում է խնդրադրում:	Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ից երկու մարտական հաշվարկ, Վարդենիսի շտապ օգնության մեկ խումբ, ոստիկանության Վարդենիսի բաժնի մեկ խումբ, Վարդենիսի գազամատակարարման, էլեկտրամատակարարման վթարավերականգնողական մեկական խմբեր ժամանում են դեպքի վայր և տեխնիկաները տեղակայում են աշխատանքների կազմակերպման համար նախատեսված տեղերում: Մասնակցում են ղեկավարի կողմից իրականացվող խնդրադրմանը:
3	14^{37}-14^{47}	Հետախուզության իրականացում:	Տալիս է հրաման՝ հետախուզություն անցկացնելու վերաբերյալ:	Դեպքի վայրում Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ից 3 ծառայողներ շնչառական ապարատներով իրականացնում են հետախուզություն ռմբակոծված տարածքում և հրդեհված ավտոմեքենայում: Հայտնաբերված են 3 տուժած փլատակներում, Վարդենիսի վթարային ծառայությունների խմբերը իրականացնում են հատուկ հետախուզություն և զեկուցում արդյունքների մասին:
4	14^{40}-14^{45}	Շարժական կառավարման կետի ծավալում:	Տալիս է հրաման՝ շարժական կառավարման կետ ծավալելու վերաբերյալ:	Ծավալում են շարժական կառավարման կետ, որտեղ անընդհատ ստացվում են տեղեկատվությունների իրավիճակի և իրականացվող միջոցառումների վերաբերյալ, որոշում են ուժերի կենտրոնացման հիմնական ուղղությունները, ուժերի և միջոցների բաշխումը ըստ աշխատանքային տեղամասերի:
5	14^{45}-15^{00}	Հրդեհաշիջման իրականացում:	Հետևում է աշխատանքների իրականացման ընթացքին:	Իրականացվում է սահմանազատում: Գեղարքունիքի ՄՓՎ Վարդեհիսի թիվ 34 ՀՓՋ-ի անձնակազմը **<u>2-րդ տեղամասում</u>՝** կատարում են հրդեհաշիջում:
6	14^{45}-15^{05}	Փրկարարական աշխատանքների իրականացում	Հետևում է որոնողափրկարարական հասարակական կարգի պահպանման, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման և առաջին օգնություն ցուցաբերելու գործընթացին:	Գեղարքունիքի ՄՓՎ Վարդենիսի, Գավառի և Մարտունու ՀՓՋ-ներից 7 ծառայող և Վարդենիսի բժշկության խումբը **<u>1-ին տեղամասում</u>** հայտնաբերված 3 տուժածներին ցուցաբերում են ԱՕ, պարանների կիրառմամբ «Դելտա» եղանակով իրականացվում է տուժածների տարհանում 3-րդ հարկից:
գա վա	14^{50}-15^{10}	Բուժ օգնության ցուցաբերում		Վարդենիսի ԲԿ-ի բժշկության խումբը և Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ից 2 ծառայող

ռի 7				ծավալում են տուժածների տեսակավորման կետ, ընդհանուր թվով 3 տուժածներին տեղափոխում են տեսակավորման կետ, որտեղից էլ ըստ առաջնահերթության շտապ տեղափոխում են Վարդենիսի ԲԿ:
8	14^{30}-15^{30}	Հասարակական կարգի պահպանություն		Ոստիկանության Վարդենիսի բաժնի խումբը իրականացնում է երթևեկության սահմանափակում և հասարակական կարգի պահպանություն :
9	14^{55}-15^{15}	Գազամատակարարման վթարավերականգնողական աշխատանքներ		«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Վարդենիսի տեղամասի վթարավերականգնողական խումբն իրականացնում է գազամատակարարման համակարգի վթարի վերացման աշխատանքներ:
10	15^{15}-15^{25}	Էներգամատակարարման վթարավերականգնողական աշխատանքներ		«ՀԷՑ» ՓԲԸ Վարդենիսի տեղամասի վթարավերականգնողական խումբը իրականացնում է էներգամատակարարման համակարգի վթարի վերացման աշխատանքներ:
11	15^{15}- 15^{30}	Ուսումնավարժության ավարտ և արդյունքների ամփոփում	Ուսումնավարժության ղեկավարը գնահատում է ուսուցանվողների գործողությունները՝ նշելով թերությունները, տալիս հանձնարարականներ՝ դրանց վերացման ուղղությամբ և հայտարարում է ուսումնավարժության ավարտ:	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը:

ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՈՒԺԵՐԻ և ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

1.Հրդեհի ազատ զարգացման ժամանակը:

$$t_{ա.զ.} = t_{մ.հ} + t_{տ} + t_{մ} + t_{մ.բ}$$

$t_{մ.հ.}$- մինչև հրդեհի հայտնաբերելու և հայտնելու ժամանակը:

$t_{տ}$– տագնապով անձնակազմի մեկնելու նախապատրաստվելու ժամանակը , այն մեկ րոպե է:

$t_{մ}$-հրդեհի վայր մեկնելու ժամանակը, հրշեջ ավտոմոբիլի միջին արագությունը, քաղաքի պայմաններում ընդունում ենք՝ 45կմ/ժ

$$t_{մ} = L \times 60 / V_1 = 3 \times 60 / 45 = 4 \text{ րոպե}$$

$t_{մ.բ}$ – մարտական բացազատման կատարման ժամանակը ընդունել 3 րոպե:

$$T_{ա.զ.} = 5+1+4+3 = 13 \text{ րոպե}$$

2. Կրակի այրման ճակատի անցած ճանապարհը

$t_{ա.զ.} > 10$ ր. $t_2 = t_{ա.զ.} - 10 = 13-10 = 3$ ր

$$L = 0.5 \times V^{ն}_{գ} \times 10 + V^{ն}_{գ} \times (t_{1.փ.} - 10) = 5.\ V^{ն}_{գ} + V^{ն}_{գ} \times t_2 = 5 \times 1.2 + 1.2 \times 3 = 9.6 \text{ մ}$$

$t_{ա.զ.}$-հրդեհի ազատ զարգացման ժամանակը, րոպե

$t_{1.փ}$- առաջին փողակով օջախ ջուր մղելու ժամանակը

Կրակը տարածվում է 9,6 մետր: Քանի որ այրվում է մեկ ավտոմեքենա , ուստի հրդեհը չի տարածվում:

3. հրդեհի մակերեսը

$$S_{հրդեհ} = n \times a\ (5.\ V^{ն}_{գ} + V^{ն}_{գ} \times t_2)$$

$$S_{հրդեհ} = 1 \times 2 \times 9,6 = \mathbf{19,2}\ \text{մ}^2 \text{ –փաստացի 8 քմ}$$

n- կրակի տարածման կողմերի քանակը

a-լայնությունը

4.**հրդեհաշիջման մակերեսը**

$$S_{հ.մ.} = n \times a \times h_{փ.մ.խ.}$$

$$S_{հ.մ} = 1 \times 2 \times 5 = 10\ մ^2$$

$h_{փ.հ.խ}$ = ձեռքի փողակի հրդեհաշիջման խորությունը, հավասար է 5 մ,

5.**հրդեհաշիջման համար պահանջվող ջրի քանակը**

$$Q^{հ}_{պ} = S_{հ.մ} \times J^{հ}_{պ.}$$

$J^{հ}_{պ.}$-ջրի մղման ինտենսիվությունն ավտոմոբիլներում ընդունված է համարել 0,1լ/վրկ.մ^2

$$Q^{հ}_{պ} = 10 \times 0,1 = 1\ լ/վրկ$$

6.**հրդեհաշիջմանն անհրաժեշտ փողակների քանակը**

$$N^{հ}_{փ} = Q^{հ}_{պ} / q_{փ}$$

$q_{փ}$ - «Բ» տեսակի փողակի թողունակությունը միջինում հավասար է 3,5 լ/վրկ

$N^{հ}_{փ} = 1 / 3.5 = 1$ հրդեհաշիջման համար անհրաժեշտ է 1 «Բ» փողակ

7. **անհրաժեշտ օղակների քանակը**

1 «Բ» փողակով ջուր մղելու համար

$$N^{օղ}_{մ} = N^{հ}_{փ} / n^{փ}_{օղ}$$

$n^{փ}_{օղ}$ –մեկ օղակի ուժերով տրվող փողակների քանակը՝ 1 փողակ

$$N^{օղ}_{մ} = 1 / 1 = 1\ օղակ$$

8.**պաշտպանության համար պահանջվող ջրի քանակը**

$$Q^{պաշտ}_{պ} = S_{պ}.x\ J^{պաշտ}_{պ}$$

$$J^{պաշտ}_{պ}= (0.5-0.3) \times J_{պ}= 0.2 \times 0.1 = 0.02\ լ/վ\ մ^2$$

Ջրի մղման ինտենսիվությունը սենյակների պաշտպանության համար ընդունենք $J_{պ}= 0.1$ լ/վրկ.մ^2

$$Q^{պաշտ}_{պ} = 0 \times 0,02=0 լ/վ$$

9.**հրդեհաշիջման և պաշտպանության համար պահանջվող ջրի քանակը.**

$$Q_{պ}= Q^{h}_{պ} + Q^{պաշտ}_{պ} = 1+0= 1\ լ/վ$$

10.**պաշտպանության համար պահանջվող փողակների քանակը**

$$N^{պ}_{փ} = Q^{պաշտ}_{պ} / q_{փ} =0/3,5= 0$$

Հավելված N 4

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հուլիսի 9 -ի
N 345-Ա որոշման